

ԹՈՒՐԻՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գրեց՝ ՀԱՅ ԳՆԴՈՒՆԻ

Գ.

ՔԵՄԱԼԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒՄՆԵՐԸ

ՄՈՒՍԹԱՅԱ Քեմալի փորձած բարենորոգումները ինքնին թուրք էութեան ու հոգիի փոփոխութեան անուրանալի ապացոյցներէն մէկը կը կազմեն: Մեր շատերու գիտցած ձեւով թուրքեր ոչ մէկ ատեն դոյութիւն ունեցած չեն արդէն: Ե՞րբ ենք ճանչցեր մենք այս մարդիկը՝ իրենց հարազատ գոյնին եւ արժէքներուն մէջ: 600 տարիէն աւելի մահիկի իշխանութեան տակ ապրող հայութեան ծոցէն լոյս աշխարհ հանուած հատոր մը փնտռեցէք, գրքոյի մը եւ յօդուած մը հարցուցէք, չկա՛յ, չպիտի՛ գտնէք: Մեր նախնիքներէն մինչեւ մեր օրերը՝ ինչո՞ւ հայ միտքը չէ սիրած իր պրոպոստներուն եւ հեռաքրքրութեան նիւթը ընել իր թշնամի եւ իշխանաւոր ժողովուրդին կեանքն ու կենցաղը, բարքերն ու սովորոյթները, յատկութիւններն ու շնորհները: Պատճառը կրնայ շահեկան չըլլալ ոմանց համար, բայց հետեւանքը ախուր ու ողբերգական է:

Մեր՝ թրքութիւնը եւ անոր հոգեկան ու իմացական մակարդակը չճանչնալու բացառապէս թերութեան պէտք է վերագրել, քեմալական բարենորոգումներու ներքին աստառն ու բովանդակութիւնը վէճի ենթարկելու զուարթ արամադրութիւնը: Բարենորոգումները, ձեւականութեան վիճակի մէջ իսկ, ո՞վ կը համարձակի սնդել, թէ այնքան զիւրին է յայտարարել ու հռչակել, ամէն օր նորութիւն մը բարդէլ երէկուանին վրայ, եւ բացի չոր յայտարարութիւնն ու հռչակումը՝ գործադրել ու իրականացնել գանոնք, նախանձելի հետեւողականութեամբ ու յաջողութեամբ:

Եւ յետոյ թուրքին յետամնացութիւնն ու արեւելեան հակումները մատի համբիջ շինելու չէ՛ անդադար: Մենք ըսինք նախորդ էջերուն

մէջ, որ թուրք զանգուածը եթէ իրապէս տրգէտ ու խաւարամիտ է, անդին կայ սակայն, մաւորականութեան, պաշտօնէութեան ու զինուորականութեան եւ մանաւանդ նորազարթ երիտասարդութեան ստուար տոկոսը, որ թրւականապէս աւելի խոշոր բազմութիւն է՝ քան հայ առաջաւոր դասը, սեւէ արգիական օրէնք ու դրութիւն երկրին մէջ մտցնելու եւ տարածելու համար:

Այսքանը ճիշտակամ հողն է քեմալական բարենորոգումներուն: Ասոր վրայ աւելցուցէք ցնցուած ու հրավառ հայրենասիրութեան մը, ազգային կատաղի զարթօնքի մը ներգործութիւնները, եւ ապա կ'ընդունիք ակամայ, որ Քեմալի օրէնքները կազկուութիւններ են միայն մե՛զ, հայերո՛ւ ահնոցներով, թէեւ Քըրիմով «Կապիկն ու ակնոցները» տարբեր փիլիսոփայութիւն թելագրեն մեզ:

Մուսթաֆա Քեմալը եւ իր արբանեակները իրենց բարենորոգումներով, լարուած ու շագրութեամբ, աննախընթաց աշխատանքներով ու աշխատասիրութեամբ, այնքան ալ տրհաս չեն կարծելու, որ իսկապէս Թուրքիան մէկ տարիէն միւսը կը նմանի Պրանսայի կամ Անգլիայի: Մարդիկ գիտեն՝ թէ զիւրին բան չէ զարբերու քանդածը մէ՛կ օրէն վերաշինել եւ կատարելութեան հասցնել: Այս կէտը չա՛տ լաւ գիտեն, եւ ասո՛ր համար է որ Գատական Գործադարին բերնով Վանի թիւրք օճաղըի հանդէսին մէջ կը պոռային. — «Հանրապետական կառավարութեան յատկանիշներէն երկրորդն է (առաջինը ազգայնականութիւնն էր), ետ չդառնալ, նոյնիսկ ետ չնայիլ, այլ միշտ յառաջանալ»:

Թուրքերը եւ անոնց ղեկավար շրջանակները՝ անտեղեակ մնալու համար իրենց կացութեան ու դրութեան, հայ մաւորականութեան տառապած երազատեսութեան եւ ցնորականութեան հիւանդութեամբը վարակուած